# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» օգոստոսի 2019 թվականի N:182 ք.Գյումրի

ՀԱԿՈԲ ԹՈՐՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հակոբ Թորոյանի 2019 թվականի օգոստոսի 14-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հակոբ Թորոյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 10 աշխատանքային օր՝ 2019 թվականի օգոստոսի 19-ից 30-ը ներառյալ:
2. Հակոբ Թորոյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության քիմիայի և կենսաբանության ուսուցիչ Լիդա Թաթոյանին:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է